ք.Վանաձոր 25.11.2025թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

**ՀՀ Լոռու մարզի Վանաձոր խոշորացված համայնքի Գուգարք բնակավայրում «Քար-Սար» ՍՊԸ-ի կողմից երկրաբանական,հետախուզական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ հանրային լսումների**

2025 թվականի նոյեմբերի 25-ին, ժամը 11:03-ին Լոռու մարզի, Վանաձոր խոշորացված համայնքի Գուգարք բնակավայրի վարչական շենքում (Լոռու մարզ, Գուգարք բնակավայր, 6րդ փողոց 47 շենք) տեղի ունեցավ «Քար-Սար» ՍՊԸ-ի կողմից երկրաբանական,հետախուզական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ հանրային լսում:

Բացման խոսքով հանդես եկավ Գուգարք բանակավայրի վարչական ղեկավար Հայկանուշ Սարգսյանը՝ ներկայացնելով հանրային քննարկումների նպատակը.

1.«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ -110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով սույն թվականի նոյեմբերի 25-ին,ժամը 11:00-ին Գուգարք բնակավայրի վարչական շենքում տեղի է ունենում «Քար-Սար» ՍՊԸ-ի կողմից երկրաբանական,հետախուզական աշխատանքներ իրականացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ հանրային լսում:

2.Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայքէջում տեղադրվել է հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավեր https://vanadzor.am/content/3701 ինչպես նաև այն փակցվել է Գուգարք բնակավայրի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

3.Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր է նշանակվել 2025 թվականի նոյեմբերի 25-ը, ժամը 11:00 :

Հ. Սարգսյանը խոսքը փոխանցեց նախագծողող ընկերության ներկայացուցիչներին:

Նախագծի հեղինակ,«Էլ Էն Դի» ՍՊԸ տնօրեն Արսակ Անտոնյանը ներկայացրեց նախագիծը, նշեց որ «Քար Սար» ՍՊԸ-ն ցանկանում է Վանաձոր խոշորացված համայնքի Գուգարք բնակավայրի վարչական տարածքում մոտ 9,3 հա տեղամասում իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ գրանիտ տեսակի օգտակար հանածո հայտնաբերելու համար: Տարածքը գտնվում է գյուղից ուղիղ գծով մոտ 5,6-ից 6 կմ հեռավորության վրա սարերի բարձրադիր հատվածներում,տեղանքը ամբողջությամբ ժայռային է,այնտեղ նույնիսկ արոտավայրի հնարավորություն չկա,սար բարձրացող նեղապարեի հենց հարակից հատվածում:Ընկերությունը ցանկանում է այդտեղ երկրաբանական,հետախուզական աշխատանքներ իրականացնել:Ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության,հանքավայր ունենալուշահագործելու համար գոյություն ունի օրինական երկու փուլ:

Առաջին փուլը դա հետախուզականն է,որի ընթացքում հաստատվում է օգտակար հանածոյի բանակը,որակը գնահատվում է, հաստատվում է լիազոր մարմնի կողմից,մեր դեպքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից,իսկ երբ որ հաստատվեց արդեն օգտակար հանածոն,որպես օգտակար հանածո իր որակական և քանակական հատկանիշներով և հաստատվեց պետական սեփականության

փնտրում նոր դրանից հետո գալիս է երկրորդ փուլը,որի արդյունքում արդեն հաստատված պատարը ընկերությունը ցանկություն է հայտնում շահագործելու:

Մենք դեռ գտնվում ենք ամենասաղաջին՝ նախնական փուլում,դեռ միայն հետախուզական աշխատանքներ պետք է իրականացնել: Հետախուզական աշխատանքները իրենցից ներկայացնում են հորատման աշխատանքներ: Հորատման աշխատանքները իրենից ներկայանցնում են հորատող մեքենան ծակելու է,որոշակի խորությունից հանելու է օգտակար հանածոն,որը տարվելու է լաբարատորիա՝ ուսումնասիրության:Ժայռային կտորների կարող է փոքր հատված,մի քանի խորանարդ մետր հանենք տանենք ստուգարան կարելու համար,ինչը մեզ թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

Տարածքի շրջակայքում ոչինչ չկա,ոչ արոտավայրեր կան,ոչ բնապահպանական ոչինչ չկա,ժայռային,լեռնային հատված է,գյուղից էլ գտնվում է 5,6 կմ հեռու,և գյուղին ոչնչով չի խանգարում:

***Հարց ու պատասխան***

Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար Հ. Սարգսյան –Որքան տարածք եք նախատեսում ուսումնասիրության համար:

Հարցին ի պատասխան Արտակ Անտոնյանը նշեց, 9,3 հա:

Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար- Հ. Սարգսյան –Իսկ ինչքան ժամանակ եք նախատեսում աշխատանքների համար:

Արտակ Անտոնյանը նշեց,այս պահին նախատեսել ենք ծրագիրը գրել երկու տարվա համար :

Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար Հ. Սարգսյան – Իսկ այդ հորատելը ինչքան խորություն է վերցնելու:

Ի պատասխան Արտակ Անտոնյանը նշեց,որ կարող է մինչև 40 մետրի կարգի,որովհետև դեռ չափագրում չենք արել,պետք է չափագրում անենք,քարտեզներ տարբերենք,ընթացքում պարզ կլինի,թե ինչքան խորության վրա ենք կարելու:

Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար Հ. Սարգսյան-Իսկ ինչպես եք զգալ,որ հենց այդտեղ կարելի է հետախուզություն անել:

Ի պատասխան Արտակ Անտոնյանը նշեց,որ նայած մոտակա տարածքում գործող հանք կա,քարի տրակը գիտենք,տեսել ենք,հետո մաս ենք եկել,բարձրացել ենք տեսել ենք,որ տարածքում ժայռեր կան:Տեսել ենք,որ արոտավայրեր չկան,որպեսզի բնակչության վնաս չտանք:

Գուգարք բնակավայրի վարչական ղեկավար Հ. Սարգսյան-Իսկ տեղյանկ եք այն պահին այդ հողերը ինչ նշանակություն ունեն:

Արտակ Անտոնյանը- Գյուղատնտեսական՝ այլ:

Արտակ Անտոնյանը հավելեց,որ այս պահին ամբողջ ֆինանսական բեռը կազմակերպության վրա է,մեծ ներդրում է լինելու,ու առանց իմանալու կլինի թե՝ոչ,որովհետև և հորատման աշխատանքները,և լաբարատորիայի աշխատանքները մեծ գումարներ են պահանջում:

Հանրային լսմանը ներկա բնակիչները նշեցին,որ առարկություններ չունեն,համաձայն են, քանի որ լեռնային գոտում է գտնվում և ոչ ձևով չի խանգարում գյուղին:

**Ամփոփում**

Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 11:30-ին:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի և լրատվության բաժնի պետ Գեղամի Հակոբյանը,բաժնի աշխատակիցներ, Գուգարք բնակավայրի փաթաթական ղեկավար Հայկանուշ Սարգսյանը:

Նախաձեռնող՝ _____ Գ.Հակոբյան

Նիստը վարող՝ _____ Հ.Սարգսյան